«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 10.04.2017թ.ժամը 17.00

Համաձայն, 29.11.2016թ-ին,պարտապան «Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի հիմնադիր՝Արագած Ախոյանի լիազոր ներկայացուցիչ- փաստաբան Ռոբերտ Գրիգորյանից,«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով,դիմում-բողոք է հասցեյագրել ՀՀ Վարչապետին,ՀՀ Արդարադատության Նախարարին և Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների Դատախազին:

ՀՀ Արդարադատության Նախարարության կողմից դիմում-բողոքը վերահասցեյագրվել է՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին,որտեղից 31.03.2017թ-ին «Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Աղասի Արսենյանի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու համար,ս/թ-ի Ապրիլի 10-ին հրավիրված Կարգապահական հանձնաժողովի նիստ.

ԾԱՆՈՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Աղասի Արսենյանը:
Բողոքաբեր՝«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Ռոբերտ Գրիգորյանը և «Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի հիմնադիր՝Արագած Ախոյանը:

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Աղասի Արսենյանը:
Բողոքաբեր՝«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Ռոբերտ Գրիգորյանը և լիազորված ներկայացուցիչ՝ Յուրա Գեորգիի Ապերյանը:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի հիմնադիր՝Արագած Ախոյանի լիազոր ներկայացուցիչ- փաստաբան Ռոբերտ Գրիգորյանից,«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով,դիմում-բողոքը ՀՀ Վարչապետին,ՀՀ Արդարադատության Նախարարին և Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների Դատախազին:

ՀՀ Արդարադատության Նախարարության կողմից վերահասցեյագրված դիմում-բողոքով «Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Աղասի Արսենյանի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննարկման հարցերը.

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված Գրությունը և բողոքը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝Աղասի Արսենյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը և եկան այն եզրակացության որ հանձնաժողովի քննարկման համար անհրաժեշտ նյութեր դիմումով,բողոքով և կից փաստաթղթերով

ներկայացվել են,որոնք հիմք են տալիս որպեսզի հարուցվի կարգապահական վարույթ հետևյալ սնանկության գործերով կառավարչի մասնագիտական վարքագծի էթիկայի կանոնների խախտման փաստի քննության նպատակով:

Հանձնաժողովի նախագահն կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հարցը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 2

Չեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի հիմնադիր՝Արագած Ախոյանի լիազոր ներկայացուցիչ- փաստաբան Ռոբերտ Գրգորյանից,«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով,դիմում-բողոքի և ՀՀ Արդարադատության Նախարարության կողմից վերահասցեյագրման գրության հիմքով «Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Աղասի Արսենյանի «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման համար,հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանին,ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1.Լսել բողոքաբերին

2.Լսել սնանկության գործով կառավարչին

3.Ուսումնասիրել ներկայացվող փաստաթղթերը

Հանձնաժողովի անդամները,բողոքաբերը,սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին:

Համձայն աշխատանքային կարգի Հանձնաժողովի Նախագահը ձայնի իրավունք տվեց բողոքաբերի ներկայացուցիչ՝Ռոբերտ Գրգորյանին,ով ներկայացրեց բողոքը:

Բողոքի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը և նշեց,որ ըստ էության բողոքում նշված փաստերը կապված՝ պահանջատիրոջ փոխարինման, ՀՏ-ի կողմից ներկայացված պահանջի,կառավարչի կողմից ներկայացված աշխատանքային պայմանագրերի և հաշվարկված աշխատավարձերի և նրանց հիմնավորումների,լրացուցիչվարչական ծախսերի և դրանց հիմնավորվածության կառավարչի առարկությունների վերաբերյալ օրենքի համապատասխան լինել կամ չլինելը,վերաբերվելի չեն կարգապահական հանձնաժողովի քննարկմանը և առավել ևս այդ մասին որոշում կայացնելը,քանի որ հենց բողոքաբերի ներկայացմամբ դրանք ներկայացվել են դատական նիստերին և օրենքով սահմանված կարգով դրանց քննությամբ և որոշման կայացմամբ իրավասու է միայն դատարանը,որը և մանրամասը քննելով վերոգրյալ բոլոր հարցերը 11.11.2016թ-ին կայացրել է ՇԴ/0006/04/14 վճիռը,որով և հիմնավորված է համարել կառավարչի առարկությունը և ըստ էության հաստատել է կառավարչի ներկայացրած վարչական ծախսերը,վարձատրությունը և աշխատավարձերը՝2 100 026 ՀՀ դրամի չափով,որպես պահանջներ,որոնք դեռ բավարարված չեն:

Ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը,ով համաձայնելով նախորդ ելույթ ունեցողի հետ ավելացրեց,որ նշված վճիռը,բողոքաբերի կողմից բողոքարկվել է ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարան,որտեղ բողոքը վերցվել է վարույթ,քննվել է սահմանված կարգով և 18.01.2017թ-ին կայացրած թիվ ՇԴ/0006/04/14 Որոշմամբ մերժել է բողոքը,իսկ 11.11.2016թ-ի վճիռը թողել է անփոփոխ և ուժի մեջ:Բողոքաբերի կողմից Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է Վճռաբեկության կարգով:ՀՀ Վճռաբեկ դատարանը իր 15.03.2017թ-ի որոշմամբ մերժել է՝«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը:

Վերոնշյալից պարզ է դառնում որ նշված փաստերը քննարկվել են ՀՀ բոլոր ատյաններում և մնացել են անփոփոխ այսինքն,ապացուցված,որ կառավարչի ներկայացրած ծախսերը, աշխատավարձերը և վարձատրությունը ճիշտ է և հիմնավորված:Այսինքն իրավասու մարմնի կողմից

կայացված որոշումները օրենքով սահմանված կարգով արդեն բողոքաբերի կողմից բողոքարկվե-
են բոլոր դատական ատյաններում,իսկ Կարգապահական հանձնաժողովը նման լիազորություն-
ներ չունի կասկած տակ դնելու դատարանի վճիռները և որոշումները,այլ ընդհակառակը դրանք
պարտադիր կատարման ենթակա են բոլորի համար,իսկ Վճռաբեկ դատարանի որոշումները
ունեն նաև նախադեպային նշանակություն,որոնցով պետք է ուղղորդվել հետագա գործունեու -
թյան ընթացքում:

Պարզաբանումներ տալու համար ձայն տրվեց կառավարիչ՝Աղասի Արսենյանին,ով
հանձնաժողովին ներկայացրեց 01.08.2016թ-ի ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության
դատարանի ՇԴ /0006/04/14 որոշման լուսապատճենը և կարդաց որոշեց մասը,ըստ որի.
-«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով պահանջատեր «Արդշինբանկ»ՓԲԸ-ին
փոխարինել իրավահաջորդով՝«Սպիտակ Կամար»ՍՊԸ-ով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 11.05.2016թ-ին ներկայացված նոր՝37 480 675 ՀՀ դրամի չափով
պահանջը գրանցելու մասին դիմումը և «Սպիտակ Կամար»ՍՊԸ-ի կողմից 20.06.2016թ-ին
ներկայացված 121 134 354 ՀՀ դրամի չափով պահանջը գրանցելու մասին դիմումը մերժել:
Պարզաբանեց նաև որ սույն որոշումը կայացվել է «Սպիտակ Կամար»ՍՊԸ-ի կողմից
դատարանին 28.10.2014թ-ին կնքված «Պահանջի զիջման մասին»պայմանագրի ներկայացման
դատարանի կողմից այն ուսումնասիրելու պարագայում,որի հնարավորությունը մինչ այդ
կառավարիչը չի ունեցել,չնայած մի քանի անգամ և բանկին և «Սպիտակ Կամար»ՍՊԸ-ին
դիմելու հանգամանքներին,որի արդյունքում բանկին մարված գումարը դիտվել է անհատույց
ստացված գումարներ,որի վերաբերյալ էլ օրենքով սահմանված ժամկետներում՝մինչև
20.04.2016թ. ներկայացվել է համապատասխան հաշվետվություն/ճշտում/:

Այդ փաստի վերաբերյալ ձայն խնդրեց պարտապանի ներկայացուցիչ՝փաստաբան Ռոբերտ
Գրիգորյանը և հայտարարեց,որ իրենք այս օրվա դրությամբ չեն աշխատում և կրում են մեծ
վնասներ,միայն Կառավարչի ներկայարած պահանջների չմարված լինելու փաստի պատճառով
և գտնում են,որ դա կառավարչի կողմից կատարվում է միտումնավոր,որը էթիկայի կանոնների
խախտում է,որի համար էլ իրենք պահանջում են,որ հարուցվի կարգապահական վարույթ և
կառավարիչ՝Ա.Արսենյանը ենթարկվի համապատասխան տույժի:

Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Աղամյանը հարց ուղղեց պարտապանի ներկայացուցչին թե
վերջին անգամ ընկերությունն մինչև երբ է աշխատել և դրանից հետո դիմել են արդյոք
սնանկության վարույթում աշխատանքներ իրականացնելու համար թե ոչ:

«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Յուրա Ապերյանը ներկայացրեց,որ
ընկերությունը վերջին անգամ աշխատել է մինչև 2013թ-ի նոյեմբեր ամիսը և ձմեռվա պատճառով
դադարեցրել է աշխատանքները,իսկ սնանկության վարույթում չէն դիմել աշխատելու համար
քանի որ ցանկացել են վերջնականապես մարել պարտավորությունները,կամ իրավական առու-
մով դուրս գալ դատական պռոցեսից,հետո նոր կազմակերպել աշխատանքները ,բայց մարելով
կամ հետաձգելով բոլոր պարտավորությունները,այդ նշված՝Հ Տ-ի,«Սպիտակ Կամար»ՍՊԸ-ի,
ներկայումս կանգնած են կառավարչի վարձատրության և վարչական ծախսերի փոխհատուց-
ման փաստի առջև,որին ըստ էության համաձայն չեն:

Հանձնաժողովի նախագահ Տ.Հարությունյանը համախմբելով կարծիքները հայտեց,որ ըստ
ներկայացված կարծիքների և փաստերի պարզվում է,որ դիմում-բողոքում և ՀՀ
Արդարադատության Նախարարության ուղած թիվ 10/15/16278 գրությամբ ներկայացված բոլոր
փաստերի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր,որոնցում արդեն
ապացուցված են համարվել ներկայացված փաստական հանգամանքները,այսինքն դրանք
արդեն կրկին անգամ քննարկման և ապացուցման անհրաժեշտություն չի կարող առաջանալ:

Համաձայն «ՍԳԿԿ ԼԿԿ սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի
էթիկայի Կանոնների 2-րդ հեղվածի 1-ին մասի.

*-Իր մասնագիտական գործունեությունը իրականացնելիս կառավարիչը պարտավոր է՝
ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ,Ինքնակարգավորվող կազմակերպության Կանոնադրությամբ
սույն Կանոններով սահմանված նորմերի պահանջներին,լինելով սկզբունքային և օրինապահ,
հարգել իր վարույթում /վարույթներում/ գտնվող գործերի բոլոր մասնակիցների օրինական
շահերը,պատիվը,արժանապատվությունը և գործարար հանբավը:*

8-րդ հոդված 1-ին կետ.

-Կառավարչի փոխհարաբերությունները սնանկության վարույթի մասնակիցների հետ:

1.1.Կառավարիչը սնանկության վարույթի մասնակիցների հետ փոխհարաբերություններում պարտավոր է՝

ա/պահպանել անաչառություն և ղեկավարվել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի պահանջներով,

բ/չիրականացնել օրենքով արգելված միջոցներ ազդելու սնանկության վարույթի մասնակիցների վրա,

գ/թույլ չտալ պատիվն ու արժանապատվությունը արատավորող արտահայտություններ,

դ/լինել կոռեկտ և վերաբերվել հարգանքով,

ե/սնանկության վարույթի մասնակիցների որ կոռեկտ և վիրավորող արտահայտություններին անդրադառնալ օրենքով սահմանված

եղանակներով՝դիմումների,հայտարարությունների,միջնորդությունների,առարկությունների կամ բողոքների միջոցով:

Ինչ վերաբերվում է սնանկության գործով կառավարիչ՝Աղասի Արսենյանի գործողություններին ապա դրանք տվյալ գործով ամբողջությամբ սահմանված են եղել օրենքով և սույն Կանոնակարգով,իսկ կառավարչի մասնագիտական վարքագծի խախտումների վերաբերյալ բողոքաբերը ոչ մի ապացույց կամ հաստատված կամ հաստատվող փաստ չներկայացրեց:

Միաժամանակ բողոքաբերը չապացուցեց նաև թե կառավարչի գործողություններից իր օրենքով երաշխավորված իրավունքի ոչ մի փաստ,որի հնարավորությունը նրան տրվել էր կարգապահական վարույթ հարուցելով և հավանական փաստական հանգամանքների ներկայացման հնարավորությունով,բայց բողոքաբերի ներկայացուցիչները փորձեցին դատարանի որոշման հիմք ծառայած կառավարչի ներկայացրած առարկությունները,որոնք միտված են եղել վարույթի այլ մասնակիցների օրինական շահերի պաշտպանությանը,ներկայացնել որպես կառավարչի մեղավորություն, որի պատճառով մերժվել իրենց «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 89-րդ հոդվածով սահմանված միջնորդությունը:

Ինչպես նշվեց վերոգրյալը չի կարող դիտվել որպես սանանկության գործով կառավարչի մեղք,քանի որ կառավարիչը պետք է պաշտպանի սնանկության վարույթի բոլոր մասնակիցների օրինական շահերը,որը և կառավարչի կողմից անաչառությամբ կատարվել է և դրական գնահատվել է նաև դատարանի կողմից,համապատասխան վճռով:

Հանձնաժողովի նախահն առաջարկեց վերոգրյալ հիմքով կարգապահական վարույթը կարճել սնանկության գործով կառավարիչ՝Աղասի Արսենյանի կողմից «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտումների բացակայության պատճառաբանությամբ:

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – «Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի հիմնադիր՝Արագած Ախոյանի լիազոր ներկայացուցիչ-փաստաբան Ռոբերտ Գրգորյանից,«Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով,դիմում-բողոքի և ՀՀ Արդարադատության Նախարարության կողմից վերահասցեյագրման գրության հիմքով «Միրոյան Տուֆ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Աղասի Արսենյանի կողմից «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքերի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ,հարուցված Կարգապահական վարույթը կարճել:

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

3.Հաստատումից հետո սույն որոշման օրինակը ուղարկել կողմերին և ՀՀ Արդարադատության Նախարարություն:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյան